ԱՄԲԵՐԴ

ՀՊՏՀ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը և արտարժույթի շուկաները
Ամսական տեսություն
(Փետրվար 2019թ)

ԵՐԵՎԱՆ 2019

Հարգելի այցելու,

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներկայացված Ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների ամսական տեսությունը հրապարակվում է ամսական հաճախականությամբ և իրենից ներկայացնում է ՀՀ ֆինանսական շուկաներում իրականացված գործարքների ամփոփ վերլուծություն: Այն իր մեջ պարունակում համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաներում տեղի ունեցած գործընթացների ու միտումների ամփոփ տեղեկատվություն. ՀՀ մակրոտնտեսական հիմնական ամսական ցուցանիշների դիտարկում. ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության ընթացքում իրականացված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև պետական, կորպորատիվ արժեթղթերի շուկաների և միջբանկային շուկաներում կնքված գործարքների վերաբերյալ ամփոփ վերլուծություն:

Ամփոփագրի մեջ տեղեկատվություն է պարունակվում համաշխարհային ապրանքային շուկաներում ոսկու, նավթի, համաշխարհային արժութային շուկաներում ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ՌԴ ռուբլու, համաշխարհաին ֆինանսական շուկաներում DJIA, FTSE 100, DAX, CAC 40, Nikkei 225 բորսայական ինդեքսների վարքագծի, դրանց շարժերի ընդհանուր միտումների մասին: Այս շուկաների դիտարկումը կարևոր է ՀՀ ընհանուր տնտեսական, ինչպես նաև ֆինանսական շուկաների վրա իրենց ազդեցությունների դիտարկման առուրմով: Համաշխարհաին շուկաների ամսական կտրվածքով դիտարկումը նպատակ չունի ներկայացնել դրանց մանրամասն վերլուծություն, կամ դիտարկումներ կատարել դրանց հետագա շարժերի կանխատեսումների համար: ՀՀ սոցյալ տնտեսական վիճակի հետ կապված հիմնական ցուցանիշների ներկայացումը նպատակ ունի ներկայացնել ՀՀ տնտեսական ակտիվության, տնտեսության հիմնական ճյուղերի զարգացումների, սպառողական և արդյունաբերական գների ինդեքսների, արտաքին ապրանքաշրջանառության և բնակչության միջին ամսական աշխատավարձերի ընդհանուր միտումները, ինչը թույլ է տալիս գնահատել Ֆինանսական շուկաների վրա մակրոտնտեսական և սոցյալ-տնտեական ընդհանուր վիճակի ազդեցությունները: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ներկայացված են ԿԲ կողմից կիրառվող անուղղակի գործիքների կիրառումը, դրանց շրջանակներում իրականացված գործարքները, ինպես նաև դրամական զանգվածի կառուցվածքը և դրանում իրականացվող փոփոխությունները: ՀՀ արտարժույթի շուկայի հետ կապված ներկայացված են ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու բորսայական, արտաբորսայական, ներբանկային և միջբանկային գործարքները, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի շուկայում իարկանացված գործառնությունները: Արժեթղթերի շուկայի վերլուծությունը բաղկացած է պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկաների հետ կապված դիտարկումներից: Պետական պարտատոմսերի շուկայի հետ կապված ներկայացվում են առաջնայիյն շուկայում դրանց տեղաբաշխումները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող հետգնումները, բորսայական և

արտաբորսայական շուկաներում կնքվող գործարքները, գործակալ բանկերի կողմից բորսայական գնանշումները, ինչպես նաև պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի փոփոխությունները: Կորպորատիվ արժեթղթերի շուկայի հետ կապված ներկայացվում են բորսայական և արտաբորսայական տեղաբաշխումները, բորսայական շուկայում կնքված գործարքները, դրանց շուկա ստեղծողների գնանշումները: Միջբանակային շուկայի վերլուծությունն իրենից ներկայացնում են միջբանկային վարկային, սվոփ և ռեպո շուկաների ամփոփ դիտարկումներ:

Ամբերդ հետազոտական կենտրոնի կողմից ֆինանսական շուկաների վիճակի և զարգացումների վերաբերյալ հրապարակվող ամփոփագրի տեղեկատվական հիմքերն են ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական Բանկի, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ հրապարակումները և վիճակագրական աղբյուրների բազաները: Ձեզ ներկայացվող վիճակագրական աղյուսակների, գծապատկերների և ներկայացվող տվյալների մի մասը նշված մարմինների կողմից օրական կտրվածքով հրապարակվող տվյալների համախմբման արդյունք են:

Սույն վիճակագրական նյութերը, վերլուծությունները և դիտարկումները ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի մտավոր սեփականությունն են և դրանցից օգտվելու դեպքում հղումը կենտրոնի կայքին պարտադիր է:

«Ամբերդ» հետազոտական կենտրոն
Երևան, Նալբանդյան 128, թիվ 3 մասնաշենք Հեռ.՝ (+37410) 593-479 Էլ. հասցե՝ info@amberd.am

Բովանդակություն

Ամփոփում.....5
1. ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականություն և դրամավարկային գործառնություններ.....7
2.Դրամական զանգված և փողի ագրեգատներ.....11
3.Արտարժույթի շուկաներ.....13

Ամփոփում

Ամփոփելով 2019թ. փետրվար ամսվա ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության շրջանակներում և արտարժութային շուկաներում կնքված գործարքներն ու իրադարձությունները՝ առանձնացնեք հետևյալը.

1. 2019թ. փետրվար ամսվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները մնացել են անփոփոխ:
2. Ամսվա ընթացքում կնքվել է 6 ռեպո գործարք՝ 613,900,000,000 ՀՀ դրամ ծավալով, իսկ լոմբարդային ռեպոյով 1 գործարքներ՝ 10,183,562: Նշենք, որ նախորդ ամսվա ընթացքում կնքվել էր 4 ռեպո գործարք: Դրամական միջոցների ներգրավման սակարկությամբ գործարքներ ինչպես նախորդ ամիս, այս ամիս ևս չեն կնքվել: Դրամական միջոցների ներգրավմամբ կնքվել է 8 գործարք՝ 112,300,000,000 ՀՀ դրամ գումարային ծավալով:
3. Դրամավարկային քաղաքականության շրջանակներում կնքվող գործարքների արդյունքում ՀՀ կենտրոնական բանկը նպաստել է իրացվելիության ավելացմանը: ՀՀ կենտրոնական բանկի տարվա ընթացքում կատարված գործարքների արդյունքում էական տատանումներով հանդերձ փողի բազան տարվա վերջին սկզբի համեմատ աճել է 5 տոկոսով: Փողի բազայի կառուցվածքում շուրջ 45 տոկոսը եղել է ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը, ինչը նախորդ ամսվա համեմատ նվազել է 2 տոկոսով:
4. Արտարժույթի բորսայական շուկայում 2019թ. փետրվար ամսվա ընթացքում գործարք չի կնքվել: Չեն եղել նաև առաջարկի և պահանջարկի հայտեր:
5. Փետրվար ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 348,417,488 ԱՄՆ դոլար՝ 487.66 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել է 406,078,502 ԱՄՆ դոլար՝ 489.08 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Ընդ որում, միջին կշռված փոխարժեքի 2.73 տոկոս աճի պայմաններում փետրվար ամսին հունվար ամսվա համեմատ ԱՄՆ դոլարի առքը աճել է 8.08 տոկոսով, իսկ վաճառքը աճել է 0.56 տոկոսով:
6. Փետրվար ամսվա ընթացքում արտարժույթի միջբանկային շուկայում գնվել 40,490,000 դոլար՝ 488.99 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով և վաճառվել է 40,990,000 ԱՄՆ դոլար՝ 488.97 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Հունվար ամսվա համեմատ փետրվար ամսին գործարքների ծավալը աճել է 3.84 տոկոսով, իսկ միջին փոխարժեքը աճել է 0,55 տոկոսով:
7. Փետրվար ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 69,793,408 Եվրո՝ 552.73 դրամ մեկ Եվրոյի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել 66,887,152 Եվրո 555.92 դրամ մեկ եվրոյի դիմաց միջին փոխարժեքով: Ընդ որում առքի միջին

կշռված փոխարժեքի 1 տոկոս աճիւ պայմաններում հունվար ամսվա համեմատ փետրվար ամսին Եվրոյով առքի գործառնությունների ծավալը աճել է 49.08 տոկոսով՝ 0.11 տոկոս փոխարժեքի աճի պայմաններում, իսկ վաճառքի միջին կշռված փոխարժեքի անփոփոխ մնալու պայմաններում հունվար ամսվա համեմատ փետրվար ամսին Եվրոյով վաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 1.611 տոկոսով 0.01 փոխարժեքի աճի դեպքում:

8. Փետրվար ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 4,888,551,741 ռուբլի 7.38 դրամ մեկ ռուբլու դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել է 2,465,012,761 ռուբլի 7.48 դրամ մեկ ռուբլու դիմաց միջին փոխարժեքով: Հունվար ամսվա համեմատ փետրվար ամսին Ռուբլով առքի գործառնությունների ծավալը նվազել է 9.91 տոկոսով շուրջ 2.06 տոկոս փոխարժեքի աճի պայմաններում, իսկ վաճառքի գործառնությունների ծավալը աճել է 28.05 տոկոսով 2.03 տոկոս փոխարժեքի աճի դեպքում:

1. ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականություն և դրամավարկային գործառնություններ

2019թ. փետրվար ամսվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվել են բաց շուկայական գործառնություններ, կիրառվել են մշտական հնարավորության գործիքներ, մինչդեռ դրամավարկային քաղաքականության հիմնական տոկոսադրույքները մնացել են անփոփոխ: Տոկոսադրույքների փոփոխության դինամիկան 2013-2019թթ. ցույց տանք գծապատկերի միջոցով.

Գծապատկեր 1. ՀՀ Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների դինամիկան 2013-2019թթ.



2019թ. փետրվար ամսվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը չի փոփոխել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքները: 2019թ. փետրվարի վերջի դրությամբ սահմանված են եղել դրամավարկային քաղաքականության հետևյալ տոկոսադրույքները՝

- դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույք - 4,25%,
- լոմբարդային ռեպո տոկոսադրույք - 7,25%,
- վերաֆինանսավորման տոկոսադրույք – 5.75%:

2019թ. փետրվար ամսվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության շրջանակներում իրականացրել է հիմնականում իրացվելիության ավելացմանը միտված բաց շուկայական գործառնություններ: Այսպես, 2019թ. փետրվար ամսվա ընթացքում ռեպո գործիքով կնքվել է 6 գործարք 613,900,000,000 ՀՀ դրամ ծավալով, մինչդեռ դրամական միջոցների սակարկության գործարքներ ընդհանրապես չեն կնքվել: Միաժամանակ նշենք, որ նախորդ ամսվա ընթացքում կնքվել էր 4 ռեպո գործարք, 17 տոկոսով ավել գործարքի ծավալով: 2019թ. փետրվար ամսվա ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բաց շուկայական գործառնությունների շրջանակներում կազմակերպած գործառնությունների արդյունքները ներկայացնենք աղյուսակի միջոցով.

Գծապատկեր 2. 2019թ. փետրվար ամսվա ընթացքում իրականացված բաց շուկայական գործառնությունները



Դիտարկվող ժամանակահատվածում բաց շուկայական գործառնությունների շրջանակներում դրամական միջոցների ներգրավման սակարկությունների գործարքներ ընդհանրապես չեն կնքվել:

Բաց շուկայական գործառնությունների շրջանակներում իրականացված 4 ռեպո գործարքների ժամկետայնությունը եղել է 7 օր, իսկ մյուս երկու գործարքներինը 91 օր:

Դիտարկվող ժամանակաշրջանում կնքվել է 6 ռեպո գործարք 613,900,000,000 ՀՀ դրամ ծավալով, ընդ որում 7 օրյա ժամկետով ռեպո գործիքով կնքվել է 593,900,000,000 ՀՀ դրամ ծավալով և 5.8 միջին կշռված տոկոսադրույքով, իսկ 91 որյա ժամկետով ռեպո գործիքով

20,000,000,000 ՀՀ դրամ ծավալով և 5,9 միջին կշռված տոկոսադրույքով: Հարկ է նշել նաև, որ առաջարկված գումարը 14 տոկոսով գերազանցել է բավարարված ծավալին: Փետրվար ամսվա ընթացքում կնքված ռեպո գործարքներին մասնակցել են 8 -12 մասնակիցներ: Փետրվարի 28-ին կնքված ռեպո գործարքի տոկոսադրույքը նախորդ ամսվա համեմատ նվազել է պայմանավորված է ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների նվազմամբ:

Ընդհանուր առմամբ 2019թ. փետրվար ամսին ՀՀ ԿԲ-ն բաց շուկայական գործառնություններ իրականացնելիս նպաստել է իրացվելիության ավելացմանը:

2019թ. փետրվար ամսվա ընթացքում կիրառվել են ինչպես դրամական միջոցների ներգրավման (նպաստում է իրացվելիության կրճատմանը, այնպես էլ լոմբարդային ռեպո գործարքներ: Դրամական միջոցների ներգրավման գործիքի կիրառմամբ կնքվել է 8 գործարք՝ 112,300,000,000 ՀՀ դրամ գումարային ծավալով: Համեմատելով 2019թ. հունվար ամսվա համապատասխան ցուցանիշների հետ՝ նշենք, որ դրամական միջոցների ներգրավման գործարքների ծավալը նվազել է ավելի քան 40 տոկոսով: Լոմբարդային ռեպո գործիքի կիրառմամբ կնքվել է 1 գործարք՝ 10,183,562 ՀՀ դրամ ծավալով:

Գծապատկեր3. 2019թ. փետրվար ամսվա ընթացքում մշտական հնարավորության գործիքներով իրականացված գործառնությունները



Բոլոր տեսակի գործարքների ժամկետը կազմել է 1 օր: Մասնակիցների առավելագույն քանակն արձանագրվել է փետրվարի 12-ին՝ դրամական միջոցների ներգրավման շրջանակներում. գործարքին մասնակցել են 11 մասնակիցներ: Ամսվա ընթացքում տեղի ունեցած մյուս գործարքնին մասնակցել են 1-3 մասնակից:

Դիտարկվող ժամանակահատվածում դրամական միջոցների ներգրավման գործարքները կնքվել են համապատասխանաբար 4.25 տոկոսով: Համեմատելով նախորդ ամսվա հետ՝ նշենք, դրամական միջոցներերի նեգրավման տոկոսադրույքները նախորդ ամսվա համեմատ չեն փոփոխվել:

Փետրվար ամսվա ընթացքում դրամական միջոցների ներգրավման գործարքների առավելագույն ծավալն ևս արձանագրվել է փետրվար 12-ին՝ 65,800,000,000 ՀՀ դրամ:

2019թ. փետրվար ամսվա ընթացքում ՀՀ ԿԲ–ն մշտական հնրավորության գործիքների միջոցով նպաստել է իրացվելիության կրճատմանը:

2.Դրամական զանգված և փողի ագրեգատներ

2019թ. փետրվար ամսվա ընթացքում փողի բազան էական տատանումներով հանդերձ, դրսևորել է հիմնականում աճման միտում: Փետրվար ամսվա սկիզբը նշանավորվել է փողի բազայի կտրուկ աճով, որը տևել է մինչև փետրվարի 5-ը: Փետրվարի 5-ին փողի բազան ամսվա սկզբի նկատմամբ աճել է շուրջ 6 տոկոսով: Հետագա օրերին փողի բազան կտրուկ անկում է ունեցել՝ փետրվարի 12-ին հասնելով ամսվա նվազագույն մեծությանը: Անկումը փետրվարի 5-ի համեմատ կազմել է 12 տոկոս: Հաջորդ օրը փողի բազան աճել է 14 տոկոսով՝ արձանագրելով ամսվա առավելագույն մեծությունը: Այնուհետև փողի բազան որոշակի տատանումներով հանդերձ հիմնականում նվազման միտում է դրսևորել: Ամսվա վերջին փողի բազայի մեծությունը գերազանցել է ամսվա սկզբի մեծությանը 5 տոկոսով: Փոփոխություններն հիմնականում պայմանավորված են եղել առևտրային բանկերի ՀՀ կենտրոնական բանկում բացված թղթակցային հաշիվների մնացորդների փոփոխություններով, ինչպես նաև ԿԲ վարվող դրամավարկային քաղաքականությամբ:

Գծապատկեր 4. Փողի բազայի փոփոխության դինամիկան 2019թ փետրվար ամսին.



Կառուցվածքային առումով փողի զանգվածի մեջ հիմնական տեսակարար կշիռը կազմել է ԿԲ-ից դուրս կանխիկ դրամը՝ դիտարկվող ժամանակաշրջանում տատանվելով 45-ից 53 տոկոսի սահմաններում: Փողի բազայի կառուցվածքում զգալի է նաև ՀՀ դրամով թղթակցային հաշիվների տեսակարար կշիռը: Վերջինս տարվա ընթացքում տատանվել է 25-ից 37 տոկոսի սահմաններում: Արտարժույթով թղթակցային հաշիվների և այլ հաշիվների տեսակարար կշիռը փողի բազայի կառուցվածքում համեմատաբար փոքր է: Փետրվարի 28-ի դրությամբ արտարժութային հաշվի տեսակարար կշիռը կազմել է 16.4 տոկոս, իսկ այլ հաշիվների տեսակարար կշիռը 5.3 տոկոս: Ինչ վերաբերում է ՀՀ դրամով թղթակցային հաշիվներին և ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի տեսակարար կշիռներին, ապա վերջիններս նույն օրվա դրությամբ կազմել են համապատասխանաբար 45.2% և 33.1%:

Գծապատկեր 5. Դրամական զանգվածի կառուցվածքը 2019թ փետրվար ամսին.



3.Արտարժույթի շուկաներ

Արտարժույթի բորսայական շուկա

Արտարժույթի բորսայական շուկայում 2019թ. Փետրվար ամսվա ընթացքում գործարք չի կնքվել: Չեն եղել նաև առաջարկի և պահանջարկի հայտեր:

Արտարժույթի արտաբորսայական շուկաներ

Արտարժույթի արտաբորսայական շուկայում Փետրվար ամսին գործարքներ են կնքվել ԱՄՆ դոլարով, Եվրոյով և Ռուբլիով:

ԱՄՆ դոլար

Փետրվար ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 348,417,488 ԱՄՆ դոլար՝ 487.66 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել է 406,078,502 ԱՄՆ դոլար՝ 489.08 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Ընդ որում, միջին կշռված փոխարժեքի 2.73 տոկոս աճի պայմաններում փետրվար ամսին հունվար ամսվա համեմատ ԱՄՆ դոլարի առքը աճել է 8.08 տոկոսով, իսկ վաճառքը աճել է 0.56 տոկոսով:

Գծապատկեր 6 . 2019թ. Փետրվար ամսին Ներբանկային արժութային շուկայում ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը և փոխարժեքը



Փետրվար ամսվա ընթացքում ԱՄՆ դոլարի փոխարժեքը դրսևորել է հիմնականում անկայուն միտում, մասնավորապես, առքի փոխարժեքը ամսվա վերջին ամսվա սկզբի համեմատ աճել է 0.55 տոկոսով, իսկ վաճառքի փոխարժեքն աճել է 1 տոկոսով: ԱՄՆ դոլարի փոխարժեքի անկայունությունը, ըստ երևույթին, պայմանավորված է ՌԴ Ռուբլու ԱՄՆ դոլարի նկատմամբ ամրապնդմամբ և ՀՀ տնտեսության ՌԴ արժույթից կախվածությամբ: Դիտարկվող ժամանակաշրջանում արտարժույթի առքուվաճառքի սպրեդը տատանվել է 1.02 (փետրվարի 8) -ից 1,88 (փետրվարի 13)- ի միջև:

Ինչ վերաբերում է Առքի և Վաճառքի գործարքների ծավալին, հունվար ամսին ԱՄՆ դոլար ավելի շատ վաճառվել է, քան գնվել: Գործարքների ծավալները անկայուն միտում են դրսևորել ամսվա ընթացքում, մասնավորապես, առքի գործարքների ծավալները տատանվել են 10,869,728 (փետրվարի 14) ԱՄՆ դոլարից մինչև 29,538,620 (հունվարի 8) ԱՄՆ դոլարի սահմաններում, իսկ վաճառքի գործարքի ծավալները տատանվել են 11,386,752 (փետրվարի 7) ԱՄՆ դոլարից 42,996,605 (փետրվարի 28) ԱՄՆ դոլարի սահմաններում:

Փետրվար ամսվա ընթացքում արտարժույթի միջբանկային շուկայում գնվել 40,490,000 դոլար՝ 488.99 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով և վաճառվել է 40,990,000 ԱՄՆ դոլար՝ 488.97 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Հունվար ամսվա համեմատ փետրվար ամսին գործարքների ծավալը աճել է 3.84 տոկոսով, իսկ միջին փոխարժեքը աճել է 0,55 տոկոսով:

Գծապատկեր 7. 2019թ. փետրվար ամսին միջբանկային արժութային շուկայում ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը և փոխարժեքը



Միջբանկային արտարժութային շուկայում ամենաշատ ԱՄՆ դոլար գնվել և վաճառվել է փետրվարի 25-ին՝ 7,300,000 ԱՄՆ դոլար՝ 490.50 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով: Ամենաքիչը գնվել և վաճառվել է փետրվարի 4-ին՝ 200,000 ԱՄՆ դոլար՝ 487.25 դրամ՝ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Եվրո

Փետրվար ամսվա ընթացքում արտարժոյթի Ներբանկային շուկայում գնվել է 69,793,408 Եվրո՝ 552.73 դրամ մեկ Եվրոյի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել 66,887,152 Եվրո 555.92 դրամ մեկ եվրոյի դիմաց միջին փոխարժեքով: Ընդ որում առքի միջին կշռված փոխարժեքի 1 տոկոս աճիւ պայմաններում հունվար ամսվա համեմատ փետրվար ամսին Եվրոյով առքի գործառնությունների ծավալը աճել է 49.08 տոկոսով՝ 0.11 տոկոս փոխարժեքի աճի պայմաններում, իսկ վաճառքի միջին կշռված փոխարժեքի անփոփոխ մնալու պայմաններում հունվար ամսվա համեմատ փետրվար ամսին Եվրոյով վաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 1.611 տոկոսով 0.01 փոխարժեքի աճի դեպքում:

Գծապատկեր 8. 2019թ. Փետրվար ամսին Ներբանկային արժութային շուկայում Եվրոյով գործարքների ծավալը և փոխարժեքը



Փետրվար ամսվա ընթացքում Եվրոյի փոխարժեքը էականորեն տատանվել է, մասնավորապես, առքի փոխարժեքը ամսվա վերջին ամսվա սկզբի դրությամբ աճել է 0,08 տոկոսով (556.02 ՀՀ դրամից դառնալով 556.45 ՀՀ դրամ), իսկ վաճառքի փոխարժեքը նույն ժամանակաշրջանի ընթացքում նվազել է 0.14 տոկոսով (560.02 ՀՀ դրամից դառնալով 559.25 ՀՀ դրամ): Դիտարկվող ժամանակաշրջանում արտարժույթի առքուվաճառքի սպրեդը տատանվել է 2.80(փետրվարի 28)- ից 5.80 (փետրվարի 15)-ի միջև: Փոխարժեքը ամսվա ընթացքում դրսևորել է անկայուն միտում: Փետրվարի 28-ի դրությամբ առքի փոխարժեքը կազմել է 556.45 ՀՀ դրամ վաճառքինը՝ 559.25ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է առքի և վաճառքի գործարքների ծավալին, ապա Եվրո ավելի շատ գնվել է քան վաճառվել է, ընդ որում, առքի ծավալը շուրջ 0.95 անգամ մեծ է եղել վաճառքի ծավալից: Առքի առավելագույն ծավալը արձանագրվել են փետրվարի 28-ին՝ 15,527,468 Եվրո(556.45 փոխարժեքով), իսկ վաճառքինը արձանագրվել է փետրվարի 14-ին՝ 4,808,429 Եվրո (552.86 փոխարժեքով): Ինչ վերաբերում է գործարքի նվազագույն ծավալներին, ապա ամենաքիչ եվրոն գնվել փետրվարի 11–ին՝ 1,292,503 Եվրո (552.41 փոխարժեքով) և ամենաքիչը վաճառվել է փետրվարի 27-ին՝ 2,097,973 (558.01 փոխարժեքով):

Արտարժույթի միջբանկային շուկայում փետրվար ամսվա ընթացքում Եվրոյով գործարքներ չեն եղել:

ՌԴ Ռուբլի

Փետրվար ամսվա ընթացքում արտարժույթի Ներբանկային շուկայում գնվել է 4,888,551,741 ռուբլի 7.38 դրամ մեկ ռուբլու դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել է 2,465,012,761 ռուբլի 7.48 դրամ մեկ ռուբլու դիմաց միջին փոխարժեքով: Հունվար ամսվա համեմատ փետրվար ամսին Ռուբլով առքի գործառնությունների ծավալը նվազել է 9.91 տոկոսով շուրջ 2.06 տոկոս փոխարժեքի աճի պայմաններում, իսկ վաճառքի գործառնությունների ծավալը աճել է 28.05 տոկոսով 2.03 տոկոս փոխարժեքի աճի դեպքում:

Գծապատկեր 9. 2019թ. փետրվար ամսին Ներբանկային արժութային շուկայում Ռուբլիով գործարքների ծավալը և փոխարժեքը



Փետրվար ամսվա ընթացքում Ռուբլու փոխարժեքը դրսևորել է անկայուն միտում, մասնավորապես, առքի փոխարժեքը ամսվա վերջին ամսվա սկզբի համեմատ աճել է 0.05 %-ով (7.405 ՀՀ դրամից դառնալով 7.409ՀՀ դրամ), իսկ վաճառքի փոխարժեքը նույն ժամանակաշրջանի ընթացքում նվազել է 0.10%-ով(7.51 ՀՀ դրամից դառնալով 7.50 ՀՀ դրամ): Դիտարկվող ժամանակաշրջանում արտարժույթի առքուվաճառքի սպրեդը տատանվել է 0.06 (փետրվարի 6)- ից 0.11 (փետրվարի 14, փետրվարի 15, փետրվարի 25) - ի միջև:

Ինչ վերաբերում է առքի և վաճառքի գործարքների ծավալներին, ապա Ռուբլի ավելի շատ գնվել է, քան վաճառվել: Առքի առավելագույն ծավալը արձանագրվել է փետրվարի 25-ին՝ 328,101,709 Ռուբլի (7.43 ՀՀ դրամ փոխարժեքով), իսկ առավելագույն վաճառքի ծավալը փետրվարի 26-ին՝ 263,268,941 ռուբլի (7.51 դրամ փոխարժեքով): Ինչ վերաբերում է գործարքի նվազագույն ծավալներին, ապա ամենաքիչ ռուբլին գնվել է փետրվարի 8-ին՝ 191,295,466 ռուբլի (7.38 ՀՀ դրամ փոխարժեքով) և ամենաքիչը վաճառվել փետրվարի 14-ին՝ 82,951,750 (7.43 ՀՀ դրամ փոխարժեքով) ռուբլի:

Արտարժույթի միջբանկային շուկայում փետրվար ամսվա ընթացքում Ռուբլիով գործարքներ չեն եղել:

Ստորև ներկայացնենք նաև ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու փոխարժեքների դինամիկան 2019թ. Փետրվար ամսվա ընթացքում.



Փետրվար ամսվա ընթացքում ռուբլին անկայուն միտում է դրսևորել: Եվրոն անկայուն միտում է դրսևորել՝ առաջին հերթին պայմանավորված միջազգային շուկայի զարգացումներով: Իսկ ինչ վերաբերում է ԱՄՆ դոլարին, ապա այն ևս անկայուն է եղել: